ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն նաշխարհագրություն 54(2), 2020 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 911.3:314

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ*, Ս. Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը երկրում առկա տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը և տարածքային քիչ թե շատ համաչափ զարգացման ապահովումն է: Հոդվածում քննարկվում է Գեղարքունիքի մարզի տարածքային համաչափ զարգացման հարցեր:

***Keywords*:** Gegharkunik province, balanced development, settledness, alternative energy, organic agriculture, territorial recreational system.

Խնդրի դրվածքը: Յուրաքանչյուր պետության տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև առկա և խորացող անհավասարություններն ու անհամաչափություններն ուղղակի և անուղղակի կերպով իրենց բացասական ազդեցությունն են թողնում երկրի զարգացման և առաջընթացի վրա: Այս իմաստով պետության տարածաշրջանային քաղաքականության գլխավոր խնդիրներից է տարածքային միավորների քիչ թե շատ հավասարաչափ զարգացման ապահովումը:

ՀՀ մարզերից Գեղարքունիքն իր տարածաշրջաններով տիպիկ անհամաչափ զարգացած տարածք է: Մարզի տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ձևավորված անհավասարությունները և անհամամասնություններն իրենց բացասական ազդեցություն են թողնում տնտեսության զարգացման վրա՝ պատճառ դառնալով ինչպես միգրացիոն և ժողովրդագրական ցուցանիշների անցանկալի փոփոխությունների, այնպես էլ մարզի էկոլոգիական հավասարակշռության խախտման: Նշված տարբերությունների մեղմացումը կամ նվազագույնի հասցնելը ՀՀ տնտեսական քաղաքականության արդի ժամանակաշրջանի գերակա հիմնախնդիրներից է:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Գեղարքունիքին բաժին է ընկնում ՀՀ տարածքի 18%-ը: Այստեղ է ապրում ՀՀ բնակչության 7,7, քաղաքային բնակչության՝ 3,5, գյուղական բնակչության՝ 15,1%-ը: Մարզին բաժին է ընկնում ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 9,6%-ը: Բնակավայրերի ընդհանուր թիվը 98 է, որոնցից քաղաքներ՝ 5, գյուղեր՝ 93: Համայնքների խոշորացման հետևանքով մարզի բնակավայրերը ներառվել են քաղաքային 5 և գյուղական 52 համայնքների միջև: 2020 թ. տարեսկզբին մարզի բնակչության թիվը կազմել է 228,3 հազ. մարդ [1]:

* E-mail: a.potosyan@ysu.am ** E-mail: sonakhachatryan96@mail.ru

Մարզի տնտեսության մեջ առաջատարը գյուղատնտեսությունն է, որի արտադրանքի ծավալով ՀՀ մարզերի մեջ երրորդն է: Գեղարքունիքին բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի 13,2%-ը: 2019 թ.-ի տվյալներով մարզի գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 118 մլրդ. դրամ [1]: Մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալում առաջինը մշակող արդյունաբերությունն է, երկրորդ տեղում՝ հանքագործական արտադրությունը: Մարզում են գտնվում Սոթքի ոսկու խոշոր հանքավայրը, որին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող ոսկու հանքաքարերի մեծ մասը, և Սևան–Հրազդան կասկադի գլխամասային՝ Սևանի ստորգետնյա ջրաէլեկտրակայանը:

Գեղարքունիքում սպասարկման ոլորտի ճյուղերը միմյանցից տարբերվում են ոչ միայն զարգացման մակարդակով և տեմպերով, այլև տարածքային կազմակերպման բնույթով և կենտրոնացվածության աստիճանով: Ամենօրյա և պարբերական պահանջարկի ծառայությունները տեղաբաշխվախված են առավել համաչափ, իսկ առավել բարդ և մասնագիտացման բնույթ ունեցող ծառայությունները կենտրոնացած են միայն որոշակի բնակավայրում:

Գեղարքունիքի մարզի տարածքն ըստ յուրացվածության աստիճանի բաժանվում է ինտենսիվ յուրացված, թույլ յուրացված, ռեկրեացիոն և բնապահպանական, տարաբնակեցման համար անբարենպաստ գոտիների: Գոտիների սահմաններն անցնում են բնական և հատակագծային սահմանափակումներով՝ գետերով, ոռոգման խոշոր ջրանցքներով, անտառների եզրերով, մայրուղային ավտոճանապարհներով, երկաթգծով [2]:



Նկ. 1: Վարդենիսի տարածաշրջանի բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերը և բնակչության կենտրոնացվածությանն աստիճանը:

Ինտենսիվ յուրացված գոտին ընդգրկում է Սևանա լճի ափամերձ շերտերին հարող հիմնականում հարթավայրային տարածքը: Այս գոտուն

բաժին է ընկնում տարաբնակեցման համար պիտանի տարածքի 8,4%-ը, որտեղ կենտրոնացված է մարզի բնակչության մոտ 74%-ը, որից քաղաքային բնակչությունը կազմում է 32,0%:

Այստեղ գտնվում են առավել արժեքավոր գյուղատնտեսական հողերը, ռեկրեացիոն ռեսուրսները (հանքային ջրեր, բուժիչ տորֆեր), բնակավայրերի 41%-ը [2]:

Թույլ յուրացված գոտին ընդգրկում է հիմնականում Սևանա լիճը եզրավորող Գեղամա, Վարդենիսի և Սևանա լեռնաշղթաների մինչև 2100–2350 *մ* բացարձակ բարձրությունները: Գետահովիտներով մինչև 2200–2350 *մ* բացարձակ բարձրություններն են ձգվում Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների բնակավայրերը՝ բնակեցման համար օգտագործելով Վարդենիսի լեռնաշղթայի սարահարթի փոքր թեքություն (մինչև 8–10°) ունեցող լանջերը [3]:

Մարզում տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին հիմնականում ընդգրկում է 2000–2100 *մ*-ից բարձր տարածքները, որոնք օգտագործվում են առավելապես որպես ամառային արոտներ և ունեն պոտենցիալ հնարավորություններ ձմեռային հանգստի և սպորտի տարբեր ձևերի կազմակերպման համար:



Նկ. 2: Գավառի տարածաշրջանի բարձր լեռնային բնակավայրերը և բնակչության կենտրոնացվածության աստիճանը:

Այս կամ այն տարածքի զարգացման համար առանձնակի կարևորություն ունի տարածքի բնակեցվածության աստիճանը կամ բնակչության ու բնակավայրերի կենտրոնացվածության աստիճանը:

Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$q_{ph} = \frac{1}{2} \sum_{i=1x} (x_i - y_i),$$

որտեղ *x*-ը տվյալ համայնքի բնակչության բաժինն է տարածաշրջանի ընդհանուր բնակչության թվում, իսկ *y*-ը՝ տվյալ համայնքի տարածքի մակերեսի բաժինն է տարածաշրջանի ընդհանուր տարածքի մեջ: Եթե $Գ_{ph}$-ն կազմում է 20%, ապա տվյալ շրջանում նկատվում է բնակչության հավասարաչափ տեղաբաշխում, եթե $Գ_{ph}$-ն՝ 20–50% է՝ բնակչության տեղաբաշխումն անհավասարաչափ է, իսկ 50-ից բարձրի դեպքում՝ խիստ անհավասարաչափ [4]:

Ինչպես երևում է ստացված քարտեզներից (նկ. 1–6) Գեղարքունիքում բնակչությունն առավել հավասարաչափ է տեղաբաշխված հատկապես Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում, անհավասարաչափ՝ Մարտունու, խիստ անհավասարաչափ՝ Սևանի և Վարդենիսի տարածաշրջաններում:

Մարզի բնակավայրերից 23-ը կամ 23,5%-ը համարվում են սահմանամերձ, 33-ը կամ 33,6%-ը լեռնային են, իսկ 59 կամ 60,2%-ը՝ բարձր լեռնային: Մարզի բնակավայրերից ընդամենը 6-ը կամ 6,2%-ը չեն համարվում լեռնային կամ բարձր:



Նկ. 3: Մարտունու տարածաշրջանի բարձր լեռնային բնակավայրերը և բնակչության կենտրոնացվածության աստիճանը:

Ըստ կատարված ուսումնասիրությունների՝ Գեղարքունիքում սոցիալ-տնտեսական զարգացման առավել ցածր մակարդակ ունեն հատկապես սահմանամերձ գոտում գտնվող բնակավայրերը, որտեղ բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և բուսաբուծությամբ: Երկու ճյուղերում էլ արդյունավետությունը ցածր է: Մշակում են կերային և հացահատիկային մշակաբույսեր, բանջարեղեն, կարտոֆիլ:



Նկ. 4: Սևանի տարածաշրջանի բարձր լեռնային բնակավայրերը և բնակչության կենտրոնացվածության աստիճանը:



Նկ. 5: Ճամբարակի տարածաշրջանի բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերը և բնակչության կենտրոնացվածության աստիճանը:

Մարզում սոցիալ-տնտեսական զարգացման առավել բարձր մակարդակ ունեն գլխավոր ավտոճանապարհների երկայնքով և դրանց մերձակայքում

տարածված բնակավայրերը, որտեղ զբաղվածության հիմնական ուղղություններն են բուսաբուծությունը, անասնապահությունը, սպասարկման ոլորտը: Զբաղվում են հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի, մշակությամբ, պտղաբուծությամբ, տավարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, մասամբ՝ ոչխարաբուծությամբ: Այս շրջաններում բնակավայրերի և բնակչության զգալի հատվածի համար եկամտի կարևոր աղբյուր է համարվում արտագնա աշխատանքից ստացված գումարները: Այս առումով առավել աչքի են ընկնում Մարտունու և Գավառի տարածաշրջանները:

Բնակչության սոցիալական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ է աղքատության մակարդակը: Գեղարքունիքի հեռավոր գյուղական բնակավայրերում աղքատության ցուցանիշն ավելի բարձր է, քան մեծ քաղաքներինը և ճանապարհներին մոտ գտնվող գյուղերում: Մարզի գյուղերում բնակվող այն տնտեսությունները, որոնք տեղակայված են կոշտ ծածկույթով ճանապարհների և շուկաների մոտակայքում, առավել ունևոր են, քան ճանապարհներից հեռու բնակվողները [2]:

Գեղարքունիքի մարզում աղքատ գյուղական համայնքների մեծ մասը գտնվում է լեռնային և բարձր լեռնային գոտիներում: Ձմռանը երկար ժամանակով ճանապարհները դառնում են դժվարանանցանելի, ինչն ուղղակիորեն ազդում է բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Ինչպես ՀՀ այլ մարզերում, այնպես էլ Գեղարքունիքում տարածքային անհամաչափ զարգացման հաղթահարումը պայմանավորված է սոցիալ-տնտեսական համալիր գործընթացների պլանավորումից և դրանց իրականացումից: Ժամանակակից պայմաններում մարզի տարածքային անհամաչափ զարգացման հաղթահարման գործում, մեր կարծիքով, առաջնահերթ դեր կարող են ունենալ հետևյալ գործընթացները.

1. Մարզում ավանդական գյուղատնտեսությանը զուգահեռ պետք է զարգացնել նաև օրգանիկ գյուղատնտեսությունը, պայմանավորված այն հանգամանքով, որ գյուղատնտեսության մեջ օգտագործված պարարտանյութերը բացասաբար են անդրադառնում Սևանա լճի էկոլոգիական վիճակի վրա: Օրգանիկ գյուղատնտեսությունն այնպիսի համակարգ է, որտեղ չեն կիրառվում տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ, քիմիական պարարտանյութեր այլ օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում:

2. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը որպես Գեղարքունիքի մարզի կայուն և համաչափ զարգացման գերակա ուղղություն:

Մեր երկրում էներգիայի վառելիքային արդյունաբերական պաշարների բացակայության պայմաններում էներգետիկ ապահովվածության և էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման համար հրամայական է դարձել էներգետիկ սեփական պաշարների, այդ թվում նաև էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ:

Գեղարքունիքի մարզը ՀՀ-ում առանձնանում է արևափայլքի տարեկան միջին տևողության առավելագույն բարձր ցուցանիշով (2700 *ժ*): Վերջինս կարող է օգտագործվել ինչպես էներգետիկ, այնպես էլ ռեկրեացիոն նպատակներով: Մարզի տարածքն աչքի է ընկնում նաև հողմաէներգիայի մեծ ներուժով:

Թեև այդ մարզում արեգակնային էներգիայի օգտագործման համար պահանջվում են կապիտալ և նյութական մեծ ներդրումներ, սակայն կատարված

ծախսերը հետագայում փոխլրացվում են ստացված կրկնակի և եռակի շահույթով: Իսկ նորագույն տեխնոլոգիաների ստեղծումը հնարավորություն կտա կառուցել առավել բարձր արդյունավետությամբ և առավել քիչ տարածք զբաղեցնող կայաններ: Այդ ամենը կնպաստի ինչպես ամբողջ մարզի, այնպես էլ նրա առանձին տարածաշրջանների և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:



Նկ. 6: Գեղարքունիքի մարզի այլընտրանքային էներգետիկ կայանները:

Գեղարքունիքի մարզում հողմաէլեկտրակայանների կառուցման համար առավել հարմար տարածքներ կան Սևան, Դդմաշեն, Ծաղկունք, Գեղամավան, Ծովագյուղ և Սեմյոնովկա համայնքների վարչական տարածքներում [5]:

Մարզում հողմայն էներգիայի օգտագործումը մի կողմից հնարավորություն կտա նվազեցնել էներգետիկ նպատակով Սևանա լճից ջրի բաց թողումը և լճի էկոլոգիական հավասարակշռության պահպանումը, մյուս կողմից՝ կնպաստի մարզի տարածաշրջանների և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

3. Զբոսաշրջությունը և ռեկրեացիան որպես Գեղարքունիքի մարզի տարածքային համաչափ զարգացման կարևորագույն գործոն: Գեղարքունիքի մարզը հարուստ է ինչպես բնածին, այնպես էլ մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով: Դրանք կարող են խթանել մարզի տնտեսական զարգացումը, ստեղծել բնակչության հանգստի և բուժման օպտիմալ միջավայր նպաստելով տարաբնակեցման համակարգի զարգացմանը: Տասնամյակներ շարունակ Գեղարքունիքում ռեկրեացիան և զբոսաշրջային գործունեությունը սահմանափակվել է լճին անմիջականորեն հարող ջրահավաք ավազանի սահմաններում՝ Սևանի ափամերձ շերտից մինչև շրջափակող լեռնաշղթաների ջրբաժանների բարենպաստ հեռավորությունը (500 *մ*-ից մինչև 20–25 *կմ*): Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում ռեկրեացիայի և շբոսաշրջության զարգացման համար բավականին մեծ ներուժ կա նաև հարակից բնակավայրերում: Այդ ռեսուրսների արդյունավետ ու խելացի օգտագործման դեպքում ռեկրեացիան և զբոսաշրջությունը կընդլայնեն իրենց աշխարհագրությունը և մարզային մակարդակով կձևավորվի մեկ ամբողջական ռեկրեացիոն-զբոսաշրջային տարածական համակարգ: Մարզային մակարդակով ռեկրեացիոն-զբոսաշրջային միասնական համակարգի ձևավորումը կնպաստի գրեթե բոլոր համայնքների, մասնավորապես՝ առանձին գյուղական բնակավայրերի զարգացմանը: Դա հնարավորություն կտա ավելացնել համայնքային բյուջեները, ստեղծել նոր աշխատատեղեր, բարեկարգել բնակավարերը, նվազեցնել միգրացիան մարզից:

Եզրակացություն: Ըստ վերը բերված վերլուծության արդյունքների՝ Գեղարքունիքի մարզի տարածքային անհամաչափ զարգացման հաղթահար-

ման գործում առաջնային դեր ունի մարզի տնտեսության դիվերսիֆիկացումը՝ տարածաշրջանային և համայնքային մակարդակով այդպիսի ճյուղերի ձևավորումը և զարգացումը: Հաշվի առնելով մարզի ռեսուրսային նախադրյալները և սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից պայմանները, առաջնահերթ այդպիսք կարող են լինել. ավանդական գյուղատնտեսության հետ միասին օրգանիկ գյուղատնտեսության, այլընտրանքային էներգետիկայի, ինչպես նաև մարզում առկա ռեկրեացիոն ռեսուրսների հիման վրա ռեկրեացիոն տարածքային համակարգերի ձևավորումը և զարգացումը:

Ստացվել է՝ 27.05.2020
Գրախոսվել է՝ 09.07.2020
Հաստատվել է՝ 20.07.2020

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://gegharkunik.mtad.am/
2. *ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017–2025 թթ.-ի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր*: Գավառ (2017), 68 էջ:
3. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ: Գիրք 1: Եր. (2002), 472 էջ:
4. Մանասյան Մ. *Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները*: Եր. (2008), 258 էջ:
5. https://www.cadastre.am/page/hxum

А. А. ПОДОСЯН, С. Ж. ХАЧАТРЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕОДОЛЕНИЯ НЕПРОПОРЦИОНАЛЬНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

Резюме

Одной из приоритетных задач социально-экономического развития Республики Армения является преодоление диспропорций развития между отдельными территориями и обеспечение более или менее сбалансированного территориального развития. В статье рассматриваются вопросы соразмерного территориального развития Гегаркуникской области.

A. A. POTOSYAN, S. Zh. KHACHATRYAN

SOME ISSUES OF OVERCOMING OF GEGHARKUNIK PROVINCE DISPROPORTIONATE DEVELOPMENT

Summary

One of the priority goals of socio-economic development of the republic of Armenia is the overcoming current disproportional development and ensuring more or less balanced development of the territories. Disbalanced territorial development problems of Gegharkunik Province are discussed in the article.